Հավելված 2
Երևանի քաղաքապետի
24.10.2024թ.
N 4098-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Դիմադրության շարժման հայազգի հերոս, բանաստեղծ Միսաք Մանուշյանի՝ Երևանում տեղադրվելիք կիսանդրու լավագույն նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընտրության նպատակով ստեղծվող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված նախագծերի բաց հրապարակային մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ) ներկայացված հայտերը և ընտրելու է լավագույն տարբերակը՝ նպատակ ունենալով ընտրված Նախագծի իրականացման միջոցով հարգանքի տուրք մատուցել հասարակական, քաղաքական և մշակութային մեծանուն գործչին:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

1) Մրցույթին ներկայացված հայտերի քննարկումը, գնահատումը՝ համաձայն ձևաչափի, որոշման ընդունումը (պահպանելով մասնակիցների գաղտնիությունը), արդյունքների ամփոփումը հանձնաժողովի նիստում:

2) Մրցույթի արդյունքներն ամփոփելով՝ մինչև երեք հայտատուներին մրցանակային տեղերում առաջադրելը և հաղթող հայտի ընտրությունը:

3) Մրցույթի արդյունքների հրապարակումը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովը որոշում է նիստերի վայրը, օրը և ժամը, Մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը, գնահատման կարգը, Մրցույթի արդյունքների հրապարակման ժամկետը և այլն:

6.Հանձնաժողովի կողմից արդեն ընդունված մրցութային հայտերը ներկայացվում են Մրցույթի կազմակերպչի կողմից նշված էլ-հասցեով (mshakuyt.dramashnorh@yerevan.am):

7. Նիստերն անցկացվում են հանձնաժողովի կողմից հաստատված ծանուցմամբ նախատեսված օրերին, ժամերին և վայրերում:

8. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին: Հանձնաժողովը որոշումներն ընդունում է անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

9. Մրցույթում նախատեսված է թվով մինչև երեք դրամաշնորհների տրամադրում:
10. Մրցույթի մրցանակային ֆոնդը կազմում է 3 (երեք) միլիոն ՀՀ դրամ, որից մեկուկես միլիոնը կհատկացվի հաղթողին, մեկ միլիոնը՝ երկրորդ, իսկ հինգ հարյուր հազարը՝ երրորդ տեղը զբաղեցրած հայտատուին:
11.Մրցույթին ներկայացված աշխատանքների քննարկումը, գնահատումը, որոշման ընդունումը, ամփոփումը կատարվում է մրցութային հանձնաժողովի կողմից նախատեսված օրը, ժամին և վայրում:
12. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:
13. Հանձնաժողովի անդամները գնահատում են քննարկվող հայտերը՝ լրացնելով գնահատման թերթիկը (հավելված 4): Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել միայն մեկ հայտ:
14. Հանձնաժողովն ընդունում է որոշում՝ մինչև երեք հայտ մրցանակային տեղերում առաջադրելու, հաղթող Նախագծի ընտրության և հրապարակում Մրցույթի արդյունքները:
15. Մրցույթում դրամական պարգևի արժանացած հայտատուների պարգևները (մրցույթի չչեղարկման պարագայում) փոխանցվում են մասնակիցների կողմից նախապես տրամադրված ֆիզիկական կամ իրավաբանական անձի բանկային հաշվին՝ Մրցույթի արդյունքները հրապարակելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում:
16. Հաղթող ճանաչված մասնակիցը պարտավոր է իր կողմից ներկայացրած կատարման ժամանակացույցին համապատասխան ներկայացնել հաշվետվություն՝ ծրագրի ավարտից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

17. Հանձնաժողովի նախագահը՝
1) վարում է Հանձնաժողովի նիստերը,
2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը,
3) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

18. Հանձնաժողովի անդամը՝
1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին,
2) լրացնում է գնահատման թերթիկը,
3) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը,
4) առաջնորդվում է Հանձնաժողովի նախագահի հրահանգներով:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

19.Հանձնաժողովի քարտուղարը՝
1) պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար,

2) ապահովում է մրցութային հայտերի գնահատման թերթիկների պատրաստումը,
3) մրցութային հայտերը տրամադրում է Հանձնաժողովի անդամներին,
4) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը,
5) ապահովում է Հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը,
6) իրականացնում է Մրցույթի վերաբերյալ հրապարակային ծանուցումը:

7. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

20. Հանձնաժողովի քարտուղարը սույն որոշման ընդունումից երեք աշխատանքային օրվա ընթացքում www.yerevan.am կայքում և այլ միջոցներով իրականացնում է Մրցույթի վերաբերյալ հրապարակային ծանուցում (հավելված 3), հետևյալ բովանդակությամբ.

«Երևանի քաղաքապետարանը հայտարարում է Միսաք Մանուշյանի կիսանդրու իրականացման նպատակով նախագծերի ներկայացման բաց մրցույթ»:

8. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

21. Մրցույթին ներկայացված հայտերի քննարկումը, գնահատումը, արդյունքների ամփոփումը և որոշման ընդունումը կատարվում է Մրցույթի կազմակերպման հանձնաժողովի կանոնակարգի համաձայն:
22. Մրցույթին կարող են մասնակցել ֆիզիկական կամ իրավաբանական անձինք:
23. Մրցութային փաթեթներն ընդունվում են Մրցույթի հրապարակման օրվանից 120-օրյա ժամկետում:
24. Մրցութային փաթեթները ներկայացվում են մրցութային հանձնաժողովին:
25. Մրցույթը բաց է և անցկացվում է մեկ փուլով:
26. Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ ոչ ուշ քան Մրցույթի հրապարակային ծանուցումից 120 աշխատանքային օր հետո, ժամը՝ 23:59 mshakuyt.dramashnorh@yerevan.am էլ-հասցեով:
27. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցները ծրագրերն իրականացնելիս սերտորեն համագործակցելու են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության հետ և վերջինին իրավունք է վերապահվում հսկողություն իրականացնել ծրագրի անցկացման ամբողջ ընթացքում:

9. ՓԱԹԵԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

28. Հայտերն ընդունվում են էլեկտրոնային տարբերակով:
29.Հայտի կազմման լեզուն հայերենն է:
30.Նամակի վերնագիր բաժնում պետք է նշվի՝ ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆ, իսկ հայտում՝ մասնակցի անվանումը (անունը), հեռախոսահամարը, էլ.փոստի հասցեն: Իրավաբանական անձի պարագայում՝ հարկ վճարողի հաշվառման համարը:
31.Հայտը պետք է ներառի՝

1) Նախագծի ամփոփ նկարագիրը,
2) Նախագծի եռադիրք լուսանկարը,
3) Դրամաշնորհի հայտով պահանջվող այլ տեղեկություններ (հավելված 3):
32. Մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:
33. Սահմանված կարգի պահանջներին ոչ համապատասխան ներկայացված հայտերը, ինչպես նաև հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո ուղարկված հայտերը մերժվում են: Հայտերն ուսումնասիրվում են վերջնաժամկետից հետո, ուստի՝ մասնակիցներին վերջնաժամկետից հետո է ծանուցվում նախագծերի ընդունված լինել/չլինելու մասին: Ծանուցումներն ուղարկվում են վերջնաժամկետին հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:
34. Մասնակիցը մինչ հայտը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը:
35. Հարցերի դեպքում կարելի է կապ հաստատել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության հետ՝ զանգահարելով +374 11 514 197 հեռախոսահամարով:
36. Մրցույթի մրցանակային ֆոնդը կազմում է (երեք) միլիոն ՀՀ դրամ:
37. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված հայտատուի/հայտատուների հետ սահմանված կարգով կկնքվի դրամաշնորհի պայմանագիր:
38. Հանձնաժողովի որոշմամբ մրցույթը կարող է չեղարկվել՝ նախագծերի ոչ նպատակահարմարության, մասնավորապես՝ մրցույթի պայմաններին չհամապատասխանող աշխատանքների կամ այլ հիմնավորման դեպքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**